Արձանագրություն N2
<< ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-15/1-2017>> ծածկագրով շրջանակային համաձայնագրի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

16 դեկտեմբերի 2016թ.
Ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Յուզբաշյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Անտոնյան, Ս. Այվազյան, Վ. Ղալումյան, Մ. Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ավագյան

1. **<< ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-15/1-2017>> ծածկագրով շրջանակային համաձայնագրի հայտերի ներկայացման վերաբերյալ**

Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 Գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գտվելու վայրը
1	«Ֆլեշ» ՍՊԸ	ք. Երևան, Ե.Կողբացու 30, Հեռ. (010)534233
2	«Մաքսիուր» ՍՊԸ	ք. Երևան, Տպագրիչների 8. 1/1 տարածք, Հեռ. (010)526751

1.2 Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

«Ֆլեշ» ՍՊԸ –ի և «Մաքսիուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, սակայն «Մաքսիուր» ՍՊԸ-ի կողմից առաջին չափաբաժնի համար գնային առաջարկով ներկայացված՝ ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկը չի համապատասխանում ընդհանուր գնին և տառերով գրվածին:

Հանձնաժողովը որոշեց մերժել «Մաքսիուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը առաջին չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում Կողմ՝ 5, Դեմ՝ 0

2. **Գնային առաջարկների ներկայացման վերաբերյալ՝**

Մասնակիցների անվանումը	Առաջարկած գինը /ՀՀ դրամ/					
	1-ին չափաբաժին		2-րդ չափաբաժին		3-րդ չափաբաժին	
	Գնի առաջարկը առանց ԱԱՀ	ԱԱՀ-ն	Գնի առաջարկը առանց ԱԱՀ	ԱԱՀ-ն	Գնի առաջարկը առանց ԱԱՀ	ԱԱՀ-ն
«Ֆլեշ» ՍՊԸ	71166666.67	14233333.33	9750000.0	1950000.0	590000.0	-
«Մաքսիուր» ՍՊԸ	71866666.67	14373333.33	-	-	578000.0	-

2.1 Հայտերի գնահատման վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց՝ առաջին տեղ զբաղեցնող ճանաչել «Ֆլեշ» ՍՊԸ -ին առաջին և երկրորդ չափաբաժինների մասով, իսկ «Մաքսիուր» ՍՊԸ-ին երրորդ չափաբաժնի մասով՝ որպես առավել ցածր գին ներկայացրած մասնակիցներ:

Երկրորդ տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Ֆլեշ» ՍՊԸ-ին երրորդ չափաբաժնի մասով:

3. Փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց առաջարկել «ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-15/1-2017» ծածկագրով ընթացակարգի նվազագույն գնային առաջարկ ներկայացրած առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին 3 աշխատանքային

օրվա ընթացքում ընթացակարգի քարտուղարի ars.avagyan@parliament.am էլեկտրոնային փոստին ուղարկել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

4. Հաջորդ նիստ հրավիրելու վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց՝ նիստ հրավիրել ս.թ. դեկտեմբերի 22-ին, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում Կողմ՝ 5, Դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ս. Յուզբաշյան

անդամներ՝ _____ Ա. Անտոնյան

_____ Ս. Այվազյան

_____ Վ. Ղալումյան

_____ Մ. Վարդանյան

Քարտուղար՝ _____ Ա. Ավագյան